ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՆԵՐԻ ԾԱՆԸՂՁԸՂՄ ԿՆԱՅԻՆ ԱԻԱԿՁԸՂԹՅԱՆ ԾԱԼԱՅԸՂԹՅԸՂՆ (IHSS) ՍՏԱՑՈՂՆԵՐԻՆ. ՊԱՀՊԱՆԵԼ ՀԵՏԱԳԱ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ

_____-ից IHSS ծրագիրը Ձեր շրջանում կիրառելու է աշխատավարձերի հաշվարկման նոր
ԱԱ/SS
համակարգ, որը կօգտագործի Նոր IHSS ժամանակացույց: Ձեր ծառայություն մատուցողը կստանա Նոր IHSS ժամանակացույցը վարձավճարի հետ մեկտեղ (Նոր IHSS ժամանակացույցի նմուշը կցված է): այս ծանուցումը ընդգրկում է տեղեկատվություն Նոր ժամանակացույցի մասին: Շատ կարեվոր է, որ ժամանակացույցը ճիշտ լրացվի, որպեսզի Ձեր ծառայություն մատուցողը ճիշտ եվ ժամանակին վճարվի: Խնդրում ենք կարդալ եվ հետեվել ծանուցման մեջ ընդգրկված հրահանգներին:

Որտեղ են հաշվարկվում Նոր ժամանակացույցները վճարման համար. Նոր ժամանակացույցները կհաշվարկվեն Կալիֆոռնիայի Չիկո քաղաքում գտնվող Ժամանակացույցների հաշվարկման հաստատությունում (TPF): **Նրանք չեն հաշվարկվելու IHSS շրջանային գրասենյակում: Ձեր ծառայություն մատուցողը ՊԵՏՔ Է ուղարկի բոլոր Նոր ժամանակացույցները Չիկոյի հաստատություն:**

Նոր ժամանակացույցը պարունակող ծրարի վրա, որը կստանա Ձեր ծառայություն մատուցողը, տպված կլինի TPF-ի հասցեն: TPF-ի հասցեն կգտնեք նաեվ Նոր ժամանակացույցի հետեվի մասում՝ ծրարը կորցնելու դեպքում: Ձեր ծառայություն մատուցողը **ՉՊԵՏՔ Է** ուղարկի կամ տանի Նոր ժամանակացույցը որեվէ IHSS շրջանային գրասենյակ: Դա կհանգեցնի վարձավճարը ստանալու հետ կապված **ՈՒՇԱՑՄԱՆ:** Հին ոճով ժամանակացույցները դեռ պետք է ուղարկվեն աշխատավարձերի հաշվարկման IHSS շրջանային գրասենյակ:

Ինչ պետք է ուղարկել Ժամանակացույցների հաշվարկման հաստատություն (TPF). TPF ուղարկեք **ՄԻԱՅՆ** ժամանակացույցը: **Մի ուղարկեք որեվէ այլ փաստաթուղթ TPF:** TPF-ում **ՉԻ** վերանայվում որեվէ այլ տեղեկատվություն: Եթե Դուք կամ Ձեր ծառայություն մատուցողը այլ տեղեկատվություն ուղարկեք, դա **ԿՈՒՇԱՑՆԻ** այս տեղեկատվության ստացումը Ձեր շրջանի կողմից: Եթե այլ տեղեկատվություն ունեք ներկայացնելու IHSS ծրագրին, ուղարկեք այն IHSS շրջանային գրասենյակ. **Մի ուղարկեք այն TPF:**

Երբ պետք է ուղարկվեն ժամանակացույցները. Ժամանակացույցները պետք է TPF ուղարկվեն յուրաքանչյուր վճարման ժամանակահատվածի անմիջապես վերջում: ամեն ամիս ունի երկու վճարման ժամանակահատված.

- մն Վճարման առաջին ժամանակահատվածն ավարտվում է ամսի 15-ին, իսկ երկրորդը՝ ամսվա վերջին օրը: Եթե Ձեր ծառայություն մատուցողը ժամանակից շուտ է ուղարկում ժամանակացույցը, ապա նրա վճարումը կամ կմերժվի կամ կերկարաձգվի մինչեվ վճարման ժամանակահատվածի վերջ:
- մն Եթե ժամանակացույցը ստանալու ամսաթվից հետո վճարման պահանջ է ներկայացված, նրա վճարումը կմերժվի: Օրինակ, եթե TPF-ը ստանում է ժամանակացույցը ամսի 10-ին, սակայն ժամանակացույցում ժամերը մուտքագրված են ամսի 14-ի համար, նրա վճարումը կմերժվի: Ձեր ծառայություն մատուցողը պետք է ստանա նոր ժամանակացույց աշխատավարձերի հաշվարկման IHSS շրջանային գրասենյակից, լրացնի այն, ստորագրի, ապա ուղարկի TPF:
- մն Եթե ժամանակացույցը ստանալու ամսաթվից հետո վճարման պահանջ չի ներկայացված, այն կերկարաձգվի մինչեվ վճարման ժամանակահատվածի վերջ, որպեսզի հաշվարկվի: Օրինակ, եթե TPF-ը ստանում է ժամանակացույցը ամսի 10-ին, սակայն ժամանակացույցում ամսի 10-ից հետո մուտքագրած ժամեր չկան, ժամանակացույցը կերկարաձգվի մինչեվ վճարման ժամանակահատվածի վերջ՝ հաշվարկման համար:
- մն Եթե Ձեր ծառայություն մատուցողը այլեվս իր ծառայությունները չի մատուցում Ձեզ, IHSS շրջանային գրասենյակը **ՊԵՏՔ Է անմիջապես** տեղեկացվի վերջինիս աշխատանքի դադարեցման ամսաթվի մասին: ապա նա իր վերջին աշխատանքային օրը պետք է ներկայացնի ժամանակացույցը եվ այն կհաշվարկվի ստանալուն պես:

Ինչպես պետք է Ձեր ծառայություն մատուցող(ներ)ը ներկայացնի աշխատած ժամերի վճարման պահանջը. Նոր ժամանակացույցում Ձեր ծառայություն մատուցողը պետք է գրի աշխատած ժամերի քանակը **ժամերով եվ րոպեներով** ամեն օր: այլեվս կարիք չկա, որպեսզի նա վերածի րոպեները տասնորդականների: Օրինակ, եթե նա աշխատել է 4 ժամ եվ 45 րոպե, պետք է մուտքագրի 4 ,Ժամերե վանդակում եվ 45՝ ,Րոպեներե վանդակում (տես օրինակը կից ներկայացված Վճարման կտրոնի նմուշի վրա):

Որքան ժամանակի համար կարող է Ձեր ծառայություն մատուցողը վճարման պահանջ ներկայացնել. Ձեզ լիազորված են որոշակի ժամեր՝ տնային կամ նրանց հետ առնչվող կամ անձնական խնամքի ծառայությունների համար: IHSS ծրագիրը վճարում է միայն լիազորված ժամերի եվ ծառայությունների համար: Ձեր ծառայություն մատուցող(ներ)ը կարող է վճարվել միայն լիազորված ծառայությունների վրա ծախսած ժամանակի համար: Դուք կամ Ձեր ներկայացուցիչը պարտավոր եք այդ ծառայությունները այնպես ծրագրավորել, որպեսզի համոզված լինեք, որ Ձեր կարիքները բավարարվում են ողջ ամսվա ընթացքում: Ձեր բոլոր ծառայություն մատուցողների համար յուրաքանչուր ամիս ներկայացված ժամերի քանակը չպետք է գերազանցի Ձեր ամսեկան լիազորված ժամերի քանակը: Եթե Դուք մի քանի ծառայություն մատուցող ունեք, պետք է յուրաքանչյուրի համար կազմեք գրաֆիկը այնպես, որպեսզի նրանց բոլորի ընդհանուր ժամերը չգերազանցեն Ձեր ամսեկան լիազորված ժամերը:

Եթե վճարման առաջին ժամանակահատվածում չափից ավել ժամեր եք օգտագործել, ապա Ձեր կարիքները կարող են չբավարարվել ամսվա մնացած մասի ընթացքում: Եթե ծառայություն մատուցողի ժամանակացույցում ներկայացված են չափից ավել ժամեր վճարման առաջին ժամանակահատվածի համար, այն կվերանայվի, եվ Ձեզ կամ ծառայություն մատուցողի հետ կկապվեն ներկայացված ժամերի քննարկման համար: Սա կարող է **ՈՒՇԱՑՆԵԼ** Ձեր ծառայություն մատուցողի վարձավճարը:

Նոր ժամանակացույցի լրացման ձեվը. Ձեր ծառայություն մատուցողը ժամանակացույցը լրացնելիս **ՊԵՏՔ Է** օգտագործի սեվ թանաք, **ՉՊԵՏՔ Է** օ գտագործի մատիտ, **ՉՊԵՏՔ Է** ծալի ժամանակացույցը եվ **ՉՊԵՏՔ Է** գրի որեվիցե այլ բան, բացի աշխատած ժամերից (ժամերով եվ րոպեներով), ստորագրությունից եվ ամսաթվից:

Նոր ժամանակացույցի ստորագրումն ու ամսաթվի մուտքագրումը. ուք կամ Ձեր ներկայացուցիչը պարտավոր եք նախքան ստորագրելը վերանայել ծառայություն մատուցողի ժամանակացույցը՝ համոզվելու համար, որ նրանում ներկայացված ժամերը ճիշտ են: **Մի** ստորագրեք սխալ կամ դատարկ ժամանակացույց: Դուք եվ ծառայություն մատուցողը պետք է ստորագրեք եվ մուտքագրեք ամսաթիվը Նոր ժամանակացույցների հետեվի մասում: առանց երկակի ստորագրության ներկայացված ժամանակացույցների վճարումը կմերժվի: Եվ հարկ կլինի լրացնել մեկ այլ ժամանակացույց: Սա **ԿՈՒՇԱՑՆԻ** Ձեր ծառայություն մատուցողի վարձավճարի ստացումը:

Ինչպես ծանուցել ծառայություն մատուցողի հասցեի փոփոխության մասին. Եթե Ձեր ծառայություն մատուցողը տեղափոխվում է, նա **ՊԵՏՔ Է անմիջապես** լրացնի հասցեի փոփոխության ձեվը, որը կարող է ձեռք բերել աշխատավարձի հաշվարկման IHSS շրջանային գրասենյակից եվ լրացնելով՝ վերադարձնել այնտեղ: IHSS վարձավճարները **չեն** ուղարկվում փոստի կողմից: Եթե աշխատավարձի հաշվարկման համակարգը չունի ծառայություն մատուցողի ճշգրիտ հասցեն, նրա վարձավճարը կվերադարձվի Նահանգային վերահսկման գրասենյակ որպես չառաքված:

ՁԵԼՄԻ ԿԱԿ ԺԱՀԵՄ ԱՅԽ ԾԱՆԸՂՁԸՂՄԸ ԺԱՄԱՆԱԿԱՁԸՂՅՁԸ ԼՀԱՁՆԵԼԻԽ:

ԵԹԵ ՀԱՀՁԵՀ ԿԱՄ ՅԳՆԸՂԹՅԱՆ ԿԱՀԻՄ ԸՂՆԵՄ ՆԸՀ ԺԱՄԱՆԱԿԱՁԸՂՅՁԸ ԼՀԱՁՆԵԼԸՂ ՀԱՄԱՀ, ԿԱԺԾԵՄ ԱՇԽԱԿԱԾԱՀՁԵՀԻ ՀԱՇԾԱՀԿՄԱՆ IHSS ՇՀԻԱՆԱՅԻՆ ԳՀԱԽԵՆՅԱԿԻ ՀԵԿ